ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 հուլիսի 2025 թվականի N 1017 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 9-Ի N 808-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հուլիսի 9-ի «Հայաստանի Հանրապետությունում կրթական ծրագրերի և նախադպրոցական ծառայության իրականացման լիցենզավորման կարգերը, լիցենզիայի ձևերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հուլիսի 7-ի N 372 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 808-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) 1-ին կետի 11-րդ ենթակետում «նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրերի» բառերը փոխարինել «մասնագիտական կրթության առաջին մակարդակի՝ արհեստագործական հիմնական կրթական ծրագրի իրավունքի» բառերով.

2) 1-ին կետի 13-րդ ենթակետում «միջին մասնագիտական կրթական ծրագրերի» բառերը փոխարինել «մասնագիտական կրթության երկրորդ մակարդակի՝ միջին մասնագիտական հիմնական կրթական ծրագրի իրավունքի» բառերով.

3) 1-ին կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 11.1-ին, 11.2-րդ, 11.3-րդ, 11.4-րդ, 13.1-ին, 13.2-րդ և 13.3-րդ ենթակետերով.

«11.1. մասնագիտական կրթության առաջին մակարդակի՝ արհեստագործական հիմնական կրթական ծրագրի իրականացման իրավունքի լիցենզիայի ձևը՝ համաձայն N 11.1 հավելվածի.

11.2. մասնագիտական կրթության առաջին մակարդակի՝ արհեստավորի կամ կրտսեր մասնագետի որակավորման (ուղղվածության) ծրագրի իրականացման լիցենզավորման կարգը՝ համաձայն N 11.2 հավելվածի.

11.3 մասնագիտական կրթության առաջին մակարդակի՝ արհեստավորի որակավորման (ուղղվածության) ծրագրի իրականացման լիցենզիայի ձևը՝ համաձայն N 11.3 հավելվածի.

11.4 մասնագիտական կրթության առաջին մակարդակի՝ կրտսեր մասնագետի որակավորման (ուղղվածության) ծրագրի իրականացման լիցենզիայի ձևը՝ համաձայն N 11.4 հավելվածի.

13.1. մասնագիտական կրթության երկրորդ մակարդակի՝ միջին մասնագիտական հիմնական կրթական ծրագրի իրականացման իրավունքի լիցենզիայի ձևը՝ համաձայն N 13.1 հավելվածի.

13.2. մասնագիտական կրթության երկրորդ մակարդակի՝ մասնագետի որակավորման (ուղղվածության) ծրագրի իրականացման լիցենզավորման կարգը՝ համաձայն N 13.2 հավելվածի.

13.3. մասնագիտական կրթության երկրորդ մակարդակի՝ մասնագետի որակավորման (ուղղվածության) ծրագրի իրականացման լիցենզիայի ձևը՝ համաձայն N 13.3 հավելվածի.»:

2. Որոշման NN 11 և 13 հավելվածներում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) N 11 հավելվածի՝

ա. վերնագրում, 1-ին, 2-րդ և 6-րդ կետերում, N 1 ձևում, N 3 ձևում «նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրերի իրականացման լիցենզավորման» բառերը և դրանց համապատասխան հոլովաձևերը փոխարինել «մասնագիտական կրթության առաջին մակարդակի՝ արհեստագործական հիմնական կրթական ծրագրի իրականացման իրավունքի լիցենզավորում» բառերով և դրանց համապատասխան հոլովաձևերով,

բ. 6-րդ կետի 5-րդ ենթակետում «, դասախոսական և արտադրական ուսուցման վարպետների» բառերը փոխարինել «և ուսումնաօժանդակ» բառերով,

գ. 8-րդ կետի 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) հիմնական մանկավարժական և ուսումնաօժանդակ կազմի պահանջի մասով՝

ա. հիմնական մանկավարժական և ուսումնաօժանդակ աշխատողների կազմի պահանջի մասով՝ հաստատության մանկավարժական և ուսումնաօժանդակ աշխատողների կազմի համապատասխանությունը «Մասնագիտական կրթության և ուսուցման մասին» օրենքով սահմանված պահանջներին, մանկավարժական կազմի առնվազն 30%-ի համար տվյալ ուսումնական հաստատությունը հանդիսանում է հիմնական աշխատավայր, իսկ օտար լեզուներով ուսուցում կազմակերպող ուսումնական հաստատությունը՝ տվյալ մասնագիտությամբ դասավանդվող հիմնական առարկաների գծով ապահովում է նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 25-ի N 1295-Ն որոշման հավելվածի 20-րդ կետի պահանջները,

բ. աշխատանքի վրա հիմնված ուսումնառության ձևերի կիրառման դեպքում՝ գործատուի հետ համագործակցության շրջանակը սահմանող փաստաթղթի (հուշագրի, պայմանագրի) և դրա իրագործումն ապահովող համապատասխան մարդկային ռեսուրսների վերաբերյալ տեղեկությունները.»,

դ. 8-րդ կետի 3-րդ ենթակետի «բ» պարբերությունը «չափաքանակի պահանջներին:» բառերից հետո լրացնել «Հրաձգարանի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի հրամանով հաստատած պահանջներին:» բառերով.

2) N 11 հավելվածի N 3 ձևը

«	արհեստանոց	»

բառից հետո լրացնել

«	ուսումնաարտադրական բազա (որակավորման շրջանակային նկարագրով նախատեսված լինելու դեպքում)
	Մարզահրապարակ (որակավորման շրջանակային նկարագրով նախատեսված լինելու դեպքում)
	Հրաձգարան (որակավորման շրջանակային նկարագրով նախատեսված լինելու դեպքում) » բառերով,

իսկ «արհեստանոցների» բառից հետո՝ «հրաձագարանի» բառով.

3) NN 11 և 13 հավելվածների՝

ա. 3-րդ կետերից հանել «որակավորման աստիճանների» բառերը, իսկ «ուսուցման ձևերի» բառերը փոխարինել «կազմակերպման ձևերի» բառերով,

բ. 6-րդ կետերի 1-ին ենթակետերում և N 1 ձևերում «կրթության ձևը» բառերը փոխարինել «կազմակերպման ձևը» բառերով,

գ. 6-րդ կետերի 5-րդ ենթակետերը «առարկան,» բառից հետո լրացնել «մոդուլը,» բառով,

դ. 6-րդ կետերի 6-րդ ենթակետերը «համակարգչային սենյակի,» բառերից հետո լրացնել «որակավորման շրջանակային նկարագրով նախատեսված լինելու դեպքում ուսումնաարտադրական տարածքների և բազաների,» բառերով,

ե. 6-րդ կետերի 9-րդ ենթակետերը «առարկայական» բառից հետո լրացնել «և մոդուլային» բառերով,

զ. 6-րդ կետերը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 12-րդ, 13-րդ, 14-րդ ենթակետերով.

«12. առողջապահության և քաղաքաշինության բնագավառի լիազոր մարմինների կողմից տեղեկանք լսարանային տարածքների, մարզադահլիճի, լաբորատոր տարածքների և ուսումնաարտադրական բազաների սանիտարահիգիենիկ և տեխնիկական անվտանգության նորմերին համապատասխանության մասին,

13. հինգ տարվա զարգացման ռազմավարական ծրագիրը,

14. հանրային և մասնավոր մասնագիտական ուսումնական հաստատությունների դեպքում՝ տեղեկանք ուսանողներին ֆինանսական աջակցություն տրամադրելու պարտավորության մասին.»,

է. 6.2-րդ կետերում «և 7-րդ» բառերը փոխարինել «, 7-րդ, 8-րդ և 9-րդ» բառերով,

ը. 6.3-րդ կետերում «և 8-րդ» բառերը փոխարինել «, 8-րդ և 9-րդ» բառերով,

թ. 8-րդ կետերի 3-րդ ենթակետերի «ա» պարբերությունները «համակարգչային սենյակի,» բառերից հետո լրացնել «որակավորման շրջանակային նկարագրով նախատեսված լինելու դեպքում ուսումնաարտադրական տարածքների և բազաների,», իսկ «սեփականության, վարձակալության, անհատույց օգտագործման» բառերից հետո՝ «իսկ գրադարանների և մարզադահլիճների դեպքում հիմք է ընդունվում նաև ծառայությունների մատուցման պայմանագրի առկայությունը.» բառերով,

ժ. 8-րդ կետերի 3-րդ ենթակետերի «բ» պարբերությունները «մարզադահլիճը» բառից հետո լրացնել «որակավորման շրջանակային նկարագրով նախատեսված լինելու դեպքում ուսումնաարտադրական տարածքների և բազաների» բառերով,

ժա. 8-րդ կետերի 3-րդ ենթակետերը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ «դ» պարբերությամբ.

«դ. **աշխատանքի վրա հիմնված** ուսումնառության ձևերի կիրառման դեպքում՝ գործատուի հետ համագործակցության շրջանակը սահմանող փաստաթղթի (հուշագրի, պայմանագրի) և դրա իրագործումն ապահովող համապատասխան նյութատեխնիկական ռեսուրսների վերաբերյալ տեղեկությունները, իսկ ուսումնական հաստատությունում իրականացվելու դեպքում՝ տեղեկություններ նյութատեխնիկական ռեսուրսների վերաբերյալ.»,

ժբ. 8-րդ կետերի 4-րդ ենթակետերի «ա» պարբերությունները շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ա. ըստ կազմակերպման ձևերի, ուսումնական պլանով նախատեսված դասընթացների առարկայական և մոդուլային ծրագրերի համապատասխանությունը **որակավորման (ուղղվածության) ծրագրի գծով** տվյալ մակարդակի յուրաքանչյուր որակավորման շրջանակային նկարագրի կամ պետական կրթական չափորոշչի պահանջներին.».

4) NN 11 և 13 հավելվածների N 1 ձևերի աղյուսակների 3-րդ սյունակներում

« Մասնագիտությունը »

բառը փոխարինել « Որակավորման (ուղղվածության) ծրագիրը » բառերով.

5) NN 11 և 13 հավելվածների N 2 ձևերում «ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿԱԶՄԻ» և **«ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱ-ԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ»** բառերը փոխարինել «ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱ-ՎԱՐԺԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԻ» բառերով, իսկ «դասա-վանդած առարկան» բառերից հետո լրացնել «կամ մոդուլը» բառերով.

6) N 13 հավելվածի՝

ա. վերնագրում, 1-ին, 2-րդ և 6-րդ կետերում, N 1 ձևում, N 3 ձևում «միջին մասնագիտական կրթական ծրագրերի» բառերը և դրանց համապատասխան հոլովաձևերը փոխարինել «մասնագիտական կրթության երկրորդ մակարդակի՝ միջին մասնագիտական հիմնական կրթական ծրագրի իրականացման իրավունքի լիցենզավորում» բառերով և դրանց համապատասխան հոլովաձևերով,

բ. 6-րդ կետի 5-րդ ենթակետում «դասախոսական» բառը փոխարինել «մանկավարժական և ուսումնաօժանդակ կազմի» բառերով,

գ. 8-րդ կետի 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) հիմնական մանկավարժական ուսումնաօժանդակ կազմի պահանջի մասով՝

ա. հիմնական մանկավարժական և ուսումնաօժանդակ աշխատողների կազմի պահանջի մասով՝ հաստատության մանկավարժական և ուսումնաօժանդակ աշխատողների կազմի համապատասխանությունը «Մասնագիտական կրթության և ուսուցման մասին» օրենքով սահմանված պահանջներին, մանկավարժական կազմի առնվազն 30%-ի համար տվյալ ուսումնական հաստատությունը հանդի-սանում է հիմնական աշխատավայր, իսկ օտար լեզուներով ուսուցում կազմակերպող ուսումնական հաստատությունը՝ տվյալ մասնագիտությամբ դասավանդվող հիմնական առարկաների գծով ապահովում է նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 25-ի N 1295-Ն որոշման հավելվածի 20-րդ կետի պահանջները,

բ. **աշխատանքի վրա հիմնված** ուսումնառության ձևերի կիրառման դեպքում՝ գործատուի հետ համագործակցության շրջանակը սահմանող փաստաթղթի (հուշագրի, պայմանագրի) և դրա իրագործումն ապահովող համապատասխան մարդկային ռեսուրսների վերաբերյալ տեղեկությունները.»,

7) N 13 հավելվածի N 3 ձևը

« արհեստանոց »

բառից հետո լրացնել

« ուսումնաարտադրական բազա (որակավորման շրջանակային նկարագրով նախատեսված լինելու դեպքում) »

բառերով:

3. Ուժը կորցրած ճանաչել որոշման 1-ին կետի 12-րդ և 14-րդ ենթակետերը և դրանցով հաստատված համապատասխան հավելվածները:

4. Որոշումը լրացնել նոր՝ NN 11.1, 11.2, 11.3, 11.4, 13.1, 13.2, 13.3 հավելվածներով՝ համաձայն NN 1, 2, 3, 4, 5, 6, 7 հավելվածների:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

6. Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման համար մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը տրված այն լիցենզիաները, որոնց համար սույն որոշմամբ առաջանում են նոր պայմաններ և պահանջներ, սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ 6-ամսյա ժամկետում, ենթակա են վերաձևակերպման:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

25.07.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ